ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1826—1828 ԹԹ. ՌՈՒՍ—ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Կ. Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայ ժողովրդի լայն խավերը գործուն մասնակցություն ունեցան 1826—1828 ԹԹ. ռուս-պարսկական պատերազմին, որը խոշոր նշանակություն ունեցավ արևելահայության ճակատագրի համար։

1826 Թ. հուլիսի 16-ին, երբ Երևանի սարդարի և նրա եղբոր՝ Հասան խանի զորքերը ներխուժեցին Շորագյալ և Փամբակ, թշնամական բանակին դիմադրության հերոսական օրինակ ցույց տվեցին Գյումրի քաղաքի մոտ գտնվող Փոքր Ղարաքիլիսա (Խլղարաքիլիսա) գյուղի անձնազոհ պաշտպանները։ Նրանք մի քանի անգամ ետ են շպրտում Հասան խանի զորաջոկատների գրոհները։ Այնուամենայնիվ թշնամուն հաջողվում է գրավել այդ գյուղը, երբ ընկնում են նրա վերջին պաշտպանները։ Արխիվային մի վավերագրի համաձայն, միայն այս գյուղից զոհվում է 1115 մարդ՝ 600 տղամարդ և 515 կին[1]։

Պատերազմի առաջին իսկ օրերին, 1826 Թ. հուլիսի 28-ին հայ աղատագրական պայքարի նշանավոր գործիչ Ներսես Աշտարակեցին ճառ է արտասանում Թիֆլիսում և թշնամուն դիմադարձ կանգնելու կոչ անում. «...ելեք, կռվեցեք մինչև արյան վերջին կաթիլը հանուն հավատի և հայրենիքի...»[2]։ Իսկ մեկ օր հետո, հուլիսի 29-ին, շրջաբերական մի նամակով նա դիմում է Թիֆլիսի, Ելիզավետպոլի, Ղարաբաղի, Նուխու, Շամախու, Բաքվի, Դերբենդի թե՛ քաղաքների և թե՛ գյուղերի հայ աղգաբնակչությանը՝ հոգևորականներին և աշխարհականներին և հորդորում զենք վերցնել ու կռվել թշնամու դեմ[3]։

Ներսես Աշտարակեցին ռուս-պարսկական պատերազմի ողջ ընթացքում շրջաբերականներով և կոչերով դիմում էր իր ժողովրդին, ոգևորում նրան, բացահայտում այն հսկայական օգուտը, որ հայ ժողովրդին կբերի ռուսական զենքի հաջողությունը, միաժամանակ պահանջում՝ բաղմակողմանի օգնություն ցույց տալ ռուսական բանակին, հավատարիմ մնալ ռուսական պետությանը։

Ահա թե ինչ էր գրում նա Հաղբատի շրջանի գործակալ Մարտիրոս քահանա Չաղինյանին. «Առաքեցի առ ձեզ այս ղտպեալ թուղթ և պատուիրեմ ընթեռնուլ զայն ի լուր ամենայն ժողովրդոց Հայոց, և յաւապէս տեղեկանս առնիլ զնա գրելոցն ի նմին և այնպէս ապա արիական հոգով ու չերմեռանդ փութով հոգ յանձին կալնուլ, խրատել և ուսուցանել զամենեսին զցայգ և զցերեկ անդադար, զի կացցեն, մնասցեն յանխարդախ յաւատարմութեամբ իւրեանց հարստացեալ արժանապէս. զի մի գուցէ վերոհասեալ սակաւիկ նե-

---

[1] ЦГИА, ф. 880, оп. 5, е. х. 18, *թթ. 11—12։*

[2] *Նույն տեղում, թ. 22—23։*

[3] *Նույն տեղում, Ա. 2—7։*

դութեամբքն տեղի ցուցեն չարահնար խորհրդոց և թելադրութեանց այլ ազգեաց, այլ որպէս մինչ յայժմ, նոյնպէս և առ փոքր մի ևս զօրասցին պահպանել զհաւատարմութիւն իւրեանց...»[4]։

Ուշագրավ է Ներսեսի նամակը Շամշադինի հայ հասարակությանը։ Այդ նամակով Աշտարակեցին պատվիրում է՝ չգայթակղվել պարսիկների խորամանկ խաղերով, երկյուղ չկրել, որ ռուսաց զորքը ետ է քաշվում որոշ սահմաններից,— դա ժամանակավոր է,— և հավատարիմ մնալ ռուսներին. «Զօրացաց ռուսաց թողուլն զհեռաւոր սահմանսն իւրեանց. մի պաշարեսցէ զմիտս ձեր այլով տարակուսութեամբ, այլ հաւատի լինիջիք, զի ոչ ետ բաղում միջոցի յառաջանանք դարձեալ անդր, քան զսահման իւրեանց յոյժ հեռաւորութեամբ»[5]։

Ռուս-պարսկական պատերազմի ողջ ընթացքում իր քաջությամբ և խիզախությամբ աչքի ընկավ Գրիգոր Մանուչարյանը։ Հատկապես պատերազմի սկզբին նա իր հինգհարյուրանոց աշխարհազորային հեծյալ ջոկատով ակտիվ դեր խաղաց Լոռի-Փամբակի և Շամշադին-Ղազախի պաշտպանական մարտերում։ Նրա գործողությունների կարևոր ոլորտներից էր Թիֆլիս—Երևան ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող ճանապարհների պաշտպանությունը։ Հենց այս կապակցությամբ Ներսես Աշտարակեցին, շնորհակալություն հայտնելով Մանուչարյանին նրա հայրենասիրական քայլերի և ռուսաց նկատմամբ անկեղծ հավատարմության համար, խորհուրդ է տալիս ավելի ուշադիր լինել ճանապարհների պաշտպանության գործում։ «Գերայարգ Գրիգոր արքեպիսկոպոս, պատուական եղբայր իմ ի Քրիստոս. գրութինք քո ժամանեալ են առ իս, և ծանուցեալ եմ վասն որպիսութեանց եղելոց ի նոսին, առ որ և շնորհակալութիւն բաղում ունիմ վասն արիաջան կառաւարութեանց ձերոց յօգուտ ազգի և ի ջերմեռանդութիւն հարազատ հպատակութեանց, որում պարտաւոր եմք յատկապես ամենայն ազգի Հայոց, որք ի դարուց ժամանակաց գտնիմք յուսացեալ յԱթոռ ողորմութեան մեծ Կայսրութեան ամենայն Ռուսաց, և վայելեմք զշնորհ բարերար հովանաւորութեանց նորին և ակն ունիմք վայելել հետզհետէ առաւելութեամբ»[6]։

Գրիգոր Մանուչարյանի արտակարգ խիզախությունն էր, որ պարսիկների ներխուժման հենց սկզբին «կանգնեցրեց իր թեմի շրջանում գտնվող մահմեդականներին [արտագաղթից]»[7]։ Խառը գրության ժամանակ ժողովրդին արտագաղթից ետ պահելու Մանուչարյանի ջանքերի համար Երմոլովը նամակով շնորհակալություն է հայտնում վերջինիս[8]։

Շամշադինի հայ հասարակության նման Լոռվա հայ բնակչությունն էլ էր իր պատրաստակամությունը հայտնում՝ ամեն մի զոհողության գնով նպաստել ռուսաց զենքի հաղթանակին։ Ներսեսին ուրախություն է պատճառում Լոռվա հասարակության այն տրամադրությունը, թե «...յօժարութեամբ հոգւոյ և մարմնոյ մատնեմք զորդիս և զընտանիս մեր ի մահ ի փառս կենսատուսուրբ խաչին և ի սէր ամենողորմած տէրութեան ռուսաց»[9]։

---

4 Մաշտոցի անվ. Մատենադարան, Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 602։
5 Նույն տեղում, վավ. 603։
6 Նույն տեղում, վավ. 648։
7 ЦГВИА, ф. ВУА, д. 894, л. 39։
8 Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 54, վավ. 269։
9 ЦГИА, ф. 880, оп. 5, ед. х. 18, л. 59։

Ռուսական զորքի նկատմամբ վերոհիշյալ շրջանների հայ բնակչության ջերմ վերաբերմունքի և զինված համագործակցության այդօրինակ ցուցաբերումը հատկանշական էր նաև մյուս շրջանների հայերին։ Այդ առումով հիշարժան է Շուշու հերոսական պաշտպանությունը, որ իրավամբ համարվում է հայ ազատագրական պայքարի նշանավոր դրվագներից մեկը։ Այն միաժամանակ հայ և ռուս ժողովուրդների անկեղծ բարեկամության քննություն դարձավ։ Այդ պաշտպանության ահավոր օրերին, եթե ռուս ռազմիկը ցույց էր տալիս իր խիզախությունն ու արիությունը, ապա հայ մարդը, իր հերթին, երևան հանեց վտանգի ժամին իր բարեկամին, ընկերոջը սատար կանգնելու պատրաստակամությունը։

1826 թ. հուլիսի 30-ին կայսրին գրած զեկուցագրում, ներկայացնելով ընդհանուր իրադրությունը, Երմոլովը մասնավորապես գրում էր Շուշու մասին, նշելով նրա ծանր վիճակը[10]։

Բերդի կայազորը բաղկացած էր 1300 զինվորից, ուներ տարբեր տրամաչափի 7 հրանոթ[11]։ Ըստ Պոտտոյի, կայազորում զինվորների թիվը եղել է մոտ 1700[12]։ Բերդի պաշտպաններին էին միացել 1500 զինված հայեր՝ հավաքված Ղարաբաղի 22 գյուղերից[13]։ Կայազորի ունեցած պարենի պակասության կապակցությամբ Պոտտոն գրում է. «...Եգերները Շուշի մտան ութ օրվա պաշարով, իսկ բերդում չկար պաշար, ինչպես և ջուր։ Կայազորին վիճակված էր վտանգավոր պայքար մղել այնպիսի թշնամիների դեմ, ինչպիսիք սովն ու ծարավն էին»[14]։ Ահա այստեղ էլ օգնության են գալիս տեղի հայերը։ Արխիվային մի վավերագրում կարդում ենք. «...Կոմենդանթն կոչեաց զտաճկաց մեծամեծ բէկերն և զմիքանի հայ բէկերեցն և զցորեան խնդրեաց ի նոցանէ, տաճկաց բէկերն, որք ունէին բաղում ցորեանս, ամենքն յետս կացին և ասեն՝ մեք ցորեան չունիմք տալոց, և ցրուեցան իւրաքանչիւր տունս, և կոչեաց կոմենդանթն որոշ ի նոցանէ ի հայսն և ցորեան խնդրեուց. նախ Աւշարենց Ջաւաթ բէկն ետ կոմենդանթին Ժ չէտվէրթ ցորեան, Զոհրապ Թառումովն ետ Զ չէտվէրթ ցորեան, Մահտեսի Պապայ Հախումովն ետ ԺԵ չէտվէրթ ցորեան, մահտեսի Միսայէլն ետ Ժ չէտվէրթ ցորեան— ի բերդինս նստեալ բոլորս հայովքն ՃԾ չէտվէրթ ցորեան շինեցին հայքս ամեն և ետուն յՕսէյի Անտոնիչին։ ...և մեք մտեալ ի բերդն՝ դռներն շինեցինք. Աստուած շեն և հաստատ պահեսցէ հայ ազգն. իւրաքանչիւր ըստ իւրեանց կարեացն Ժ մանեթով չէտվէրթն ցորեան առին և ետուն ռուսաց զօրացն. ոմն հինգ չէտվէրթ, ոմն Ժ չէթվէրթ, փողովն տաւար առին և ետուն ռուսաց զօրքին։ Ոմանք իւրեանց մսացու տավարներն տվին, փայտ տվին, հաց տվին... հայ ազգն Բ ամիս դիշերներն քեշիկ են արեալ բերդին վերայ և ցերեկներր փահլի նման իւրեանց ուլախովն քար և ջուր կրել, բերդի խախուտ տեղերն շինել, չուն[քի] խափանեալ տեղեր շատ կայր...»[15]։

Երմոլովը Ռեուտին հղած կարգադրություններից մեկում գրում էր. «Գլխով եք պատասխանատու բերդի պաշտպանության համար։ Պաշտպանվե-

[10] ЦГВА, ф. ВУА, д. 4290, թ. 39—42։
[11] Նույն տեղում, գ. 4291, թ. 61։
[12] В. Потто, Кавказская война, т. III, СПб., 1886, էջ 78։
[13] ЦГВИА, ф. ВУА, д. 4291, թ. 61։
[14] В. Потто. նշվ. աշխ., էջ 78։
[15] Եաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 54, վավ. 342։

ցեր մինչև վերջին մարդը... Այնպես որ չծագի ստոր միտք բերդը հանձնելու մասին»[16]։ Մեկ այլ նամակում նա պահանջում էր. «Մեծահոդաբար վերաբերվեք հայերին, չէ՞ որ նրանք լավ են ծառայում»[17]։ Շուշիում հայերը, իրոք, անձնուրացության և խիզախության բաղմաթիվ օրինակներ ցույց տվեցին։ Այս փաստերն արդեն չէին կարող որոշ չափով չգնահատվել ռուսական հրամանատարության կողմից։ Ռեուտը, պաշարումը վերջանալուց հետո, Պասկևիչին հղած զեկուցագրերից մեկում գրում է, որ պարսիկները բաղմիցս մոտեցան բերդի պարիսպներին և ետ շպրտվեցին «քաջ եգերների ու նվիրված հայերի» կողմից[18]։ Իսկ Երմոլովին նա հաղորդում է հետևյալը. «Ամրոցը պաշտպանող հայերի մասին պարտք եմ համարում բացատրել, որ նրանց մատուցած ծառայությունը արժանի է ուշադրության, քանզի նրանք ամենքը գործում էին գերազանց քաջությամբ, դիմադրում էին դակառակորդի բազմաթիվ գրոհներին ու ետ էին շպրտում նրանց համար մեծ կորուստներով, արհամարհում էին պարենի պակասը և ոչ մի անգամ չեն մտածել ամրոցի հանձնման մասին, նույնիսկ երբ վրա հասավ բացարձակ սովը»[19]։

Շուշու հերոսական պաշտպանության ժամանակ աչքի են ընկել նաև հայերից առանձին անհատներ։ Դրանցից Հարություն Ալթունովը, վտանգի ենթարկելով իր անձը, գիշերները իջնում է պաշարված բերդի պարսպից, անցնում պաշարման օղակը, լուր տանում ռուսական հրամանատարությանը և մի քանի օրից հետո վերադառնում Երմոլովի նամակով[20]։ Օրական 20—30 ֆունտ բարձրորակ վառոդ էր պատրաստում և անվճար տալիս բերդի պաշտպաններին Բարութչի Պողոսը[21], իսկ Աղաբեկ Քալանթարովին, գեներալ Իվան Լազարևի պապին, Ռեուտն իր մոտ է կանչում և անձամբ հանձնարարում Ելիզավետպոլի դարպասներին հարող բերդապարսպի տեղամասերից մեկի պաշտպանության հրամանատարությունը[22]։ Շուշի գյուղի ջրաղացները, որոնք չափազանց կարևոր նշանակություն ունեին կայազորի համար, պաշտպանվում էին շուշեցի երկու եղբայրների՝ Սաֆար և Ռոստով Թարխանյանների կողմից[23]։ «Հերոսներ էին մինչև իսկ նրանց կանայք և նրանցից մեկին՝ Խաթունին, այն ժամանակ գիտեր ողջ Ղարաբաղը»[24]։

Հիրավի, ակնառու է եղել հայկական փոքրիկ այս գյուղի քաջագործությունը. «Գյուղս այս անկոնի յարևելս կոյս համանուն Շուշի քաղաքի ի ձորամէջ տեղւոջ, բնակիչք են հայք տունք հարիւր յիսուն, քաջութեամբ գերազանցեալ, քան զամենայն բնակիչս Ղարաբաղայ։ Ի 1826 ամի զօրաւոր հանդիսացան ընդ դէմ բաղմաթիւ պարսից և չարաչար հարին զթանձրութիւնս

16 В. Потто, նշվ. աշխ., էջ 86։

17 Նույն տեղում։

18 ЦГВИА, ф. ВУА, д. 4290, թ. 150։

19 В. Потто, Первые добровольцы Карабага, Тифлис, 1902. էջ 62։

20 Նույն տեղում։

21 «Ген.-лейтенант Иван Давидович Лазарев», Тифлис, 1900. էջ 27—28։

22 Նույն տեղում։

23 В. Потто, Первые добровольцы Карабага, էջ 81։

24 Նույն տեղում, էջ 64։

բանակի նոցին... ցուցին և զանկասկած հաւատարմութիւն առ տէրութիւնն ռուսաց համաձայն ազգային ընդարձոյս բնութեանց...»[25]։

Շուշու պաշարման վերացումից հետո, անդրադառնալով այնտեղ ծավալված հերոսական գործողություններին ու դեպի ռուսները տեղի հայության ունեցած անսասան հավատարմությանը, Ներսես Աշտարակեցին այսպես է գրում Հովհաննես արքեպիսկոպոսին. «Հոչակաւոր է հաւատարմութիւն հայոց բնակելոց ի Շուշի քաղաք և մերձակայս նորին, որք ըստ չափու երից հզօրաց զինուորեալք ընդ զինուորութիւնս ռուսաց զդէմ կալան յօդնութիւ զօրուն պարսից և բնածիր ազգական խորամանկութեանց և զանազան շողոքորթութեանց և խոստմանց, որով և ապրեցուցին ոչ միայն զանձինս և զքաղաք իւրեանց զՇուշի բերդ, այլև զբազումս իսկ զնահանգս Վրաստանու սահմանաց և զբնակիչս...[26]։

Ռուսական զորաջոկատները նախապես մղում էին ակտիվ պաշտպանողական մարտեր։ Ամենուրեք նրանց կողմն էր հայ ազգաբնակչության բոլոր խավերի համակրանքը։ Շատ էին տուժում հայկական բնակավայրերը «համառության և այն համագործակցության համար, որ ցուցադրում էին նրանց բնակիչները Ռուսաստանի օգտին»[27]։

Գեներալ Երմոլովը դիմում է վրացիներին և հայերին՝ քսան օրվա ընթացքում Թիֆլիս գալ մարտական առաջադրանք ստանալու համար[28]։ Արխիվային մի վավերագրի համաձայն, օգոստոսի 17-ին արդեն, արձագանքելով Երմոլովի կոչին, հավաքվում են 4000 հեծյալներ հայերից և վրացիներից[29]։ Որքան էլ այս հնօրյա վավերագիրը արժանահավատ չթվա հեծյալների քանակի իմաստով, այդուհանդերձ անհերքելի է մի փաստ՝ ռուսական բանակի նկատմամբ հայ և վրաց եղբայրական ժողովուրդների ունեցած համակրանքը, նրան նյութական և զինական օգնություն ցույց տալը։

1826 թ. աշնան, Շամխորի և Դյանջայի՝ պատերազմի ելքը կանխորոշող հաղթանակներից հետո, դեռևս հարձակողական նոր մարտեր չէին ձեռնարկվում, սակայն մտադրություն կար Նախիջևանի վրա հարձակվելու։ Այդ նպատակի համար, ինչպես հիշատակվում է արխիվային մի վավերագրում[30], Եփրեմի կոչով և Ներսեսի ներգործությամբ, հայերից նորից կազմվում է հեծյալների մի ջոկատ, որը կռվելու էր Մադաթովի հրամանատարության տակ՝ Նախիջևանի վրա հարձակվելիս։ Իսկ Նախիջևանի հայ բնակչությունը «պատրաստ էր միահամուռ կերպով համագործակցելու ռուսական զենքի հաջողությանը»[31]։

1826 թ. նոյեմբերի կեսերին Վրաստանում բնակվող մի շարք ազդեցիկ հայեր աշխարհազորային նոր ջոկատներ ստեղծելու խնդրանքով դիմում են ռուսական հրամանատարությանը, սակայն գեներալ Երմոլովը մերժում է նրանց խնդրանքը՝ պատճառաբանելով ռուսական զորքի բավարար քանա-

---

25 Սարգիս Ղազարյան, ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, էջ 244։

26 Մաշտոցի անվ. Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 103, գործ 9, վավ. 83։

27 ЦГИА, ф. 880, оп. 5, ед. х. 18, թ. 14։

28 Նույն տեղում, թ. 15։

29 Նույն տեղում, թթ. 16—17։

30 ЦГВИА, ф. ВУА, д. 4312, թթ. 27—28։

31 Նույն տեղում։

կով[32]։ Դրան ի պատասխան, պարսիկները Արարատյան դաշտի բազմաթիվ գյուղերի հայ բնակչությանը քշեցին Արաքսից այն կողմ, որպեսզի «կտրեն նրանց ամեն մի հարաբերություն ռուսների հետ»[33]։

Երևանի սարդարը և նրա եղբայր Հասան խանը հայ բնակչության նկատմամբ իրենց դաժան վերաբերմունքն արդարացնում էին ասելով, թե՝ «Հայոց կաթողիկոսը, արքեպիսկոպոսները, բացի այդ, հայ իշխաններն ու աղնվականները և բնակչության մյուս խավերը համագործակցում են Ռուսաստանի օգտին, կազմում աշխարհազորային ջոկատներ և մեծապես վնասում Պարսկաստանին»[34]։

1826--1827 թթ. ձմռանը մարտական գործողությունների ժամանակավոր դադարը ոչ այլ ինչ էր, եթե ոչ Երևանի վրա արշավելու նախապատրաստության շրջան։ Այս ընթացքում էլ, ինչպես երևում է Մանվել վարդապետին Եփրեմ կաթողիկոսի հղած օրհնության գրից[35], հայ գործիչների մոտ անսասան էր Արարատյան աշխարհի մոտալուտ ազատագրման հույսը։ Այս հույսը համընդհանուր էր, և դրա իրականացման ձգտումն էր, որ գեներալ Մադաթովի զորաջոկատին էր միացրել հայկական և ադրբեջանական աշխարհազորայիններից նաև այն 700 հոգուն, որոնք զինված էին միայն մահակներով[36]։

Պարսկական խաների լծից ազատագրվելու հավատը վառ պահելու, ռուսական զենքի հաջողությանը նպաստող նպատակամղիչ գործողություններ ծավալելու վերաբերյալ հայ ազգաբնակչությանն Աշտարակեցու հղած կոչերն ու հորդորները մեծ ազդեցություն էին թողնում։ Այդ փաստը անհայտ չէր Կովկասի ռուսական հրամանատարությանը, հայտնի էր նաև Նիկոլայ I-ին, որը 1827 թ. փետրվարի 2-ին ստորագրեց իր գոհունակությունը պարունակող հրովարտակը՝ ուղղված Ներսես Աշտարակեցուն՝ պարսիկների հանկարծակի հարձակման ժամանակ ռուսների նկատմամբ ցուցաբերած հարազատության ու հավատարմության առթիվ. «Պարսիկների կողմից խաղաղության խախտումն ու մեր սահմանների վրա հարձակվելը Վրաստանում բնակվող հայերի համար առիթ ծառայեց իսկությամբ ցուցադրելու իրենց ջերմեռանդությունը և անկեղծ անձնազոհությունը դեպի մեզ։ Այս դիպվածով նրանք ցույց տվեցին, թե գիտեն իրենց նկատմամբ կառավարության ունեցած հոգացողության դինը»[37]։

Չնայած հարձակողական գործողությունների դադարին, Ներսեսը լիահույս էր, որ դրանք շուտով կվերսկսվեն և կլինեն այնքան շեշտակի, որ ոչ ուշ, քան հունիսի վերջերին ռուսական դրոշը կբարձրանա Թավրիզի պարիսպների վրա։ Իր այս ցանկությունը և մտորումները նա հաստատակամությամբ հայտնում է Երևանում բնակվող Բարսեղ-աղա Գաբրիելյանին. «Ես զայս գրեմ համառոտիւ, որ դու ինքդ ինձ հաւատասցես այնպէս, որպէս կարես ինքդ յուսալ... նոյնպէս ես գրեմ հաւատարմացուցանել ամենայն հաւատարմացքոց հայոց և տաճկաց, որ հասեալ է ժամանակ և իզուր են յայսմհետէ այն

32 Նույն տեղում, թ. 20։
33 Նույն տեղում, թ. 21։
34 Նույն տեղում, թթ. 18—19։
35 Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վավ. 30.
36 ЦГВИА, ф. ВУА, д. 4312, թթ. 27—28։
37 ЦГИА, ф. 880, оп. 5, ед. х. 381. թ. 22а։

ամենայն կարծիք, թէ Տիցիանովն եկն և վերադարձաւ, գրաֆ Կուտովիչն եկն և վերադարձաւ, այլևս ասեմ ձեզ, որ ոչ անագան այժմ գայ առ ձեզ բարձր փառաւորագոյն և անցանէ ի Դաւրէժ, և անտի յառաջ, գուցէ և Թեհրան։ Ձձշմարտութիւն բանից իմոց համարիմ ինձ փառք յաւիտենական. վասն և ոչ խնայիմ գրել ձեզ այժմ. զի հզօր ձեռն մեծ Կայսերութեան ամենայն ռուսաց բարձրացեալ է և սուր նորա և հուր տարածեսցի ի գլուխս ամենայն հակառակորդաց տէրութեան իւրոյ. և աչք ձեր ոչ անդր, քան զլրումն հունիսի տեսցեն զդրօշակ նորին Կայսերական Մեծութեան ի վերայ պարսպաց Դաւրիժոյ...»[38]։

Հասնում է ցանկալի պահը. 1827 թ. ապրիլի 2-ին Կովկասյան հատուկ կորպուսի առաջապահ մի զորաբաժին, գեներալ Բենկենդորֆի գլխավորությամբ, Ներսես Աշտարակեցու ուղեկցությամբ, դուրս է գալիս Բորչալուից և նույն ամսի 13-ին առանց կռվի հասնում է Էջմիածին ու գրավում այն։ Էջմիածնում Բենկենդորֆի զորաջոկատն ընդունվում է ցնծությամբ, վանքի կողմից ռուսաց զորքին տրվում է «գինի՝ ավելի քան զհազար թունդի, և ալիւր և ցորեան իբրև 1200 կամ ավելի փութ»[39]։ Այդ մթերքը պարսիկներից թաքցրել էր Էջմիածնի մառանապետ Դանիել վարդապետը[40]։

Ներսեսը Էջմիածնից հորդորական և հուսադրական նոր նամակներ է հղում Երևան և Նախիջևան քաղաքների և շրջակայքի հայ ազգաբնակչությանը. «Գիտեմ, զի ըստ որում այս վեցերորդ է յառաջանալն զօրաց ռուսաց մինչև ի սահմանս Երևանու և Նախիջևանու՝ տարակուսեցուցանէ զձեզ մեծապէս իրաւացի կարծիք, որ կարէ յառաջանալ յամենեսին ի ձեզ ի նախանցեալ փորձաց անտի, սակայն կարող եք դուք իսկ զանազանել ինքնին ի մէջ այն ամենայն անցելոցն զօրաշարժութեանց ռուսաց և այսմ ներկայ ահեղ պատերազմաց... և զօրք նորա չուզին վերադառնալ ըստ առաջնոցն, այլ կան և կայուց են յաւիտեան ի հովանաւորութեան հայրենեաց Հայաստանի և ի սփոփանս նեղեալ և վշտացեալ ժառանգաւորաց նորին որդւոց Արամայ»[41]։

Ներսեսը հավատում էր, որ այս արշավի հետևանքով Երևանի և Նախիջևանի խանությունները կազատագրվեն պարսկական լծից։ Դեռ ավելին, 1827 թ. ապրիլի 20-ի մի նամակով նա Խաչատուր Լազարյանից պահանջում էր ուղարկել լեհական կառավարության կանոնադրությունը, իր պահանջը պատճառաբանելով այսպես՝ որպեսզի «...մեք կարողացուք խորհրդածել զվայելչականացն ազգի Հայոց աստի Հայաստան աշխարհի ի ծաղս սահմանաց Ռուսաստանի»[42]։

Գալով Էջմիածին, Աշտարակեցին Արարատյան դաշտը տեսնում է ամայացած, բնակչության մի մասը քշված «ի դաւառն Պայազիտոյ»[43]։ Արարատյան դաշտի հայերի քանակական նվազեցման մասին ցավով գրում է նաև Ստեփանոս վարդապետ Վաղարշապատցին Մինաս արքեպիսկոպոսին հասցեագրված նամակում. «Զհասարակութիւն բնակչաց Էջմիածնի, Օշականայ և Աշտարակայ 11 ամսոյն, աւուրք յառաջ, քան զմուտ մեր այսր, չուեցեալ էին,

38 Մաշտոցի անվ. Մատենադարան, Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 721։
39 Նույն տեղում, Լազարյանների արխիվ, թղթ. 103, գ. 5, վավ. 229։
40 Նույն տեղում, թղթ. 106, գ. 51, վավ. 5։
41 Նույն տեղում, Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 785։
42 Նույն տեղում, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 13։
43 Նույն տեղում, Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 772։

և անցուցեալ ընդ Երասխ գետ, դտանին նոքա այժմ ի ստորոտ լերինն Մասսեաց բաղում տառապակրութեամբ։

Լայնաձաւալ և բաղմամարդ այն դաշտն Արարատեան, որ երբեմն ծիծաղական և զուարճալի դինքն ցուցանէր իւրով առատ բարութեամբ և անթիւ բնակչօք, այսօր տեսանի արդարև աշխարհելի և անհնարին սգով լի վասն պակասելոցն ինքեան իւրոց բնակչաց»[44]։

Ներսես Աշտարակեցուն մտահոգում էր մինչև Բայազետի սահմանները բշված հայ բնակչության դրությունը։ Նա վճռում է գեներալ Բենկենդորֆի անունից դիմել թուրքական սահմանապահ փաշային՝ առաջարկելով հեռացնելու այդ ժողովրդի նեղիչ պարսիկ պաշտոնյաներին[45], մինչև որ հայերը կկարողանան վերադառնալ իրենց բնակավայրերը։ Իսկ Արծափ գյուղի Հովհաննես քահանային, մյուս հոգևորականներին ու ողջ բնակչությանը շնորհակալություն է հայտնում այն բանի համար, որ նրանք քաջաբար արտաքսել են Երևանից և Էջմիածնից այդ կողմերը տարված հայ ազգաբնակչության նկատմամբ չարագործություններ կատարող պարսիկ պաշտոնյաներին և վստահեցնում նրանց՝ երկյուղ չկրել պարսիկներից, քանի որ այս անգամ արդեն ռուսաց զորքը անպայման գրավելու է Երևանն ու Նախիջևանը։ «Ապաքեն ես նախայայտնելով այսու ձերում հասարակութեան զմեծ շնորհակալութիւն իմ, յայտնեմ և զսոյն ճշմարտութեամբ, զի զուք այսուհետև չունեցիք ամենայն զկասկած երեսաց պարսից, զի երկիրն Երևանու և Նախիջևանու է այսուհետև յատկացեալ կայսրութեան ամենայն ռուսաց. և զօրք նորին չունին վերադառնալ միւս անգամ. և աչք պարսից չունին տեսանել միւս անգամ իշխանութիւն իւրեանց յԵրևան և ինքն Սարտարն, որ ըստ խնամոց Աստուծոյ գտնի պաշարեալ ի բերդն Երևանու՝ ոչ ետ բազում աւուրց եղիցի... գերի կալանաւոր զօրաց ռուսաց»[46]։

Բենկենդորֆի գլխավորած զորամասը դուրս գալով Էջմիածնից, չորսօրյա կռիվներից հետո հասել էր Երևան և ապրիլի 27-ին սկսել Երևանի պաշարումը։

Նախքան այս զորամասի Էջմիածնից դուրս գալը, Դիբիչը, իմանալով Բենկենդորֆի դիտավորության մասին, դեռևս ապրիլի 18-ին ցարին հղած զեկուցագրում հայտնում է, թե Բենկենդորֆի առաջապահ ջոկատը զգում է պարենի խիստ պակաս, իսկ գեներալը որոշել է հարձակվել Սարդարապատի և Երևանի վրա։ Ապա ավելացնում է. «Խոստովանում եմ Ձերդ Բարձրությանը, որ ես չգիտեմ, թե ինչպես բացատրել գեներալ-ադյուտանտ Բենկենդորֆի այս դիտավորությունը նման պարագաներում»[47]։

Պետք է ենթադրել, որ պարենի հայթայթման հարցում Բենկենդորֆը նկատի է ունեցել Ներսեսից սպասվելիք օգնությունը։ Պակաս դեր չի խաղացել նաև նույն խնդրի կապակցությամբ Արարատյան դաշտի հայ բնակչության նկատմամբ ունեցած հավատը։ Այդ առթիվ ապրիլի 16-ի մի այլ զեկույցում ասվում է. «Փոխգնդապետ Կոլժենսկուն գրվել է՝ ձեռնարկել մթերքի

44 Նույն տեղում, Հազարյանների արխիվ, թղթ. 106, դ. 51, վավ. 33։
45 Նույն տեղում, Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 760։
46 Նույն տեղում, վավ. 162։
47 ЦГВИА, ф. ВУА, д. 4326, թթ. 183—184։

կուտակման գործը, քանի որ բնակիչները, աշխուժացած Երևանի մարզում մեր գտնվելուց, վերադարձել են իրենց տները»[48]։

Ռազմական գործողությունների վերսկսումը և ռուսական զորքի կողմից Երևանի բերդի պաշարումը ուրախությամբ էր համակել ողջ հայությանը։ «Զցանկալի նամակ հայրութեան ձերոյ, գրեալ ի 30 մայիսի տարվոյս, ընկալուք բազում ուրախութեամբ, նշմարեալ ի նմին զամենաբաղձալի լուր առողջութեան անձին սրբազնութեան ձերում, ես բան զևս ցնծացուք և յուսալիր գործառութեն Քրիստոսազօր բանակին»[49],— այսպես է գրում Ներսեսին Շահան Ջրպետը։ Այսպիսի տրամադրության արդասիք էր նաև Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսին Մինաս արքեպիսկոպոսի հասցեագրած նամակը։ Հայտնելով Երևանի պաշարման մասին, Մինաս արքեպիսկոպոսը նշում էր նաև, որ գեներալ Պասկևիչը Մոսկվայից ստացած նոր թնդանոթներով պատրաստվում է մեկնել Երևան[50]։

Իրոք, Կովկասյան կորպուսի գլխավոր ուժերը, Պասկևիչի գլխավորությամբ, հունիսի 8-ին արդեն էջմիածնում էին։ Կորպուսի ռազմական գործողությունների օրագրի հունիսի 10-ի ամսաթվի տակ կարդում ենք. «Այստեղ գտնվող հայ արքեպիսկոպոս Ներսեսը բոլոր հնարավոր միջոցներն օգտագործում է, որպեսզի ուժեղացնի մեր ազդեցությունը սույն երկրամասում։ Ես այդ հոգևոր պետին հանդիպեցի Ռուսաստանի օգտին հայկական բոլոր համայնքներին համախմբելու ուղղությամբ աշխատելիս»[51]։

Հասնելով Երևանը պաշարող զորաջոկատին, կորպուսի գլխավոր ուժերը միանում են նրան, շարունակում են պաշարողական աշխատանքները՝ բերդը գրոհելու նպատակով։ Սակայն Պասկևիչը, որոշ նկատառումներով, ներքնապես համաձայնվելով բերդի գրոհը աշնանը ձեռնարկելու մասին դեկաբրիստ Մ. Պուշչինի առաջարկին, որոշում է գլխավոր ուժերով շարժվել դեպի Նախիջևան, իսկ բերդի պաշարումը թողնել գեներալ Կրասովսկու ղեկավարությամբ գործող զորաջոկատին։ Կրասովսկուն դեռևս հունիսի 13-ին (կորպուսի գլխավոր ուժերը դեպի Նախիջևան են շարժվում հունիսի 19-ին) Պասկևիչը հանձնարարականներ է տալիս[52]։ Առաջարկվում է պաշարումը շարունակել մինչև շոգերի սաստկանալը, թշնամուն թույլ չտալ հաղորդակցվել բերդի հետ։ Հանձնարարականի 4-րդ կետը վերաբերում է Ներսես Աշտարակեցուն։ Այստեղ ասվում է. «Քանի որ ռազմական գործը ամբողջովին կարող է ձեզ զբաղեցնել, ես օգտակար եմ համարում էջմիածնի շրջապատը վերադարձած և նրա մոտակայքում գտնվող վայրերի բնակչության ղեկավարությունը հանձնարարել Ներսես արքեպիսկոպոսին՝ ձեր լիակատար ազդեցության տակ։ Նկատի ունենալով նրա փորձառությունը, խելամտությունը և կառավարությանը նվիրված լինելը, նրա վրա պարտականություն դնել հատուկ ուշադրություն դարձնել առավել շատ հացահատիկի հավաքմանը։ Այդ բանում հնարավորության սահմաններում համագործակցել նրան»[53]։ Հանձնարարա-

---

48 ЦГИА, ф. 880, оп. 5, ед. х. 193, թ. 105։

49 Մաշտոցի անվ. Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 153, վավ. 180։

50 Նույն տեղում, Լազարյանների արխիվ, թղթ. 106, դ. 51, վավ. 37։

51 ЦГИА, ф. 1018, оп. 3, ед. х. 193, թ. 146։

52 Նույն տեղում, թ. 149—151։

53 Նույն տեղում, թ. 150։

կանի 8-րդ կետով առաջարկվում է շոգերը սաստկանալիս թողնել Երևանի պաշարումը, բայց պահել էջմիածինը[54]։

Երևանի պաշարման վերացումը սկսվում է հունիսի 23-ին[55]։

Երևանի պաշարման վերացման, ռուսական զորաջոկատի՝ Արայի լեռան ստորոտներն ուղևորվելու, էջմիածնում թողնված ռուսական ջոկատի և հայկական կամավորական գումարտակի մասին խաչատուր Լազարյանին տեղեկացնելիս, Ներսեսը հույս է հայտնում, որ օգոստոսի կեսերին Երևանի բերդը նորից կպաշարվի և դա կունենա ցանկալի վախճան. «...և մեք մերայնովին հանդերձք ունիմք սպասել մինչ ցկեսն օգոստոսի, յետ որոյ գործակցութեամբ տեառն վերադարձեալ նոցին, պաշարեսցէն անդրեն տիրագոյն պաշարմամբ, լորժամ թերևս ողորմութեամբ տեառն արժանացուք մեք և հայրենիք մեր վախճանական նպատակին ցանկացելոյ»[56]։ Այս վավերագրում էլ է նշվում էջմիածնի պաշտպանության համար թողնված հայկական գումարտակի մասին։

Հայկական կամավորական գումարտակներ ստեղծելու նախաձեռնությունը պատկանում էր Ներսես Աշտարակեցուն։ Այս գործում նրա մերձավորագույն օգնականն էր Թիֆլիսի նորաբաց Ներսիսյան դպրոցի տեսուչ, հայրենասեր բանաստեղծ Հարություն Ալամդարյանը։ Ռուսական հրամանատարությունը ընդառաջում է այդ նախաձեռնությանը։ Հաստատվում է 34 կետից բաղկացած հատուկ «Առաջադրություն»[57]։ Եվ քանի որ, ինչպես ասվել է վերը, Ներսեսը ռուսական առաջապահ զորաջոկատի հետ ապրիլի 2-ին ուղեվորվել էր էջմիածին, կամավորական գումարտակներ կազմակերպելու գործով հիմնականում զբաղվել է Ալամդարյանը, ունենալով Թիֆլիսի զինվորական գեներալ-նահանգապետ Սիպյագինի աջակցությունը։ Մայիսի 15-ին հայկական առաջին կամավորական գումարտակին հանձնվում է հատուկ պատրաստված զինադրոշ[58]։ Դրոշի հանձնման արարողության ժամանակ հայրենասիրական ճառ է արտասանում Հարություն Ալամդարյանը[59]։ Հայկական կամավորական գումարտակը, գործող բանակին միանալու նպատակով, Թիֆլիսից դուրս է գալիս մայիսի 15-ին[60]։

Շատ շուտով նախաձեռնվում է հայկական կամավորական երկրորդ գումարտակի կազմակերպման գործը։ Մայիսի 24-ին նորաստեղծ գումարտակի մարտիկներին կոչով դիմում է գեներալ Սիպյագինը. «Անցյալ տարի պարսկական զորքերը մեր սահմանները խուժելու պահից հայերն աչքի ընկան թշնամու դեմ անվեհերությամբ, կրած զրկանքների մեջ անհողդողդ հաստատակամությամբ, քրիստոնեական հավատին անսահման նվիրվածությամբ, ռուսական գահին օրինապահ հավատարմությամբ։ Ինքնակալ միապետը ողորմած ուշադրության արժանացրեց իրեն ջերմորեն հավատարիմ հայերին։ Եվ չնայած ռուսական զորքը բավական է թշնամուն պարտության մատնելու համար, առանց կողմնակի ուժերի մասնակցության, բայց և այնպես, նորին

54 Նույն տեղում։
55 ЦГВИА, ф. ВУА, д. 4324, թ. 12։
56 Մաշտոցի անվ. Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 69։
57 ЦГВИА, ф. ВУА, д. 4336, թթ. 2—5։
58 Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վավ. 194։
59 «Դիվան հայոց պատմության», գիրք ԺԴ, Թիֆլիս, 1915, էջ 9—14։
60 ЦГВИА, ф. ВУА, д. 4336, թ. 6։

գերազանցությանը հաճելի էր ունենալ սույն պատերազմում իր քաջարի զորքերի շարքում այստեղի հայերից կազմված աշխարհազորայիններին։ ...Հայերը ոգևորությամբ արձագանքեցին իրենց ուղղված կոչին, և հայտարարության երրորդ օրը ես տեսա զենքի տակ համախմբված հայկական դրուժինան...»[61]։

Հայկական կամավորական գումարտակների կազմակերպման հաջող ընթացքը ուրախություն էր պատճառել ժամանակի հայ գործիչներին։ Այդ փաստը պարզորոշ երևում է Մելիքսեդեկ Ղամազյանի 1827 թ. հունիսի 6-ի նամակից (ուղղված Խաչատուր Լազարյանին), ուր կարդում ենք. «...զօրք հայոց օրաւուր յաւելանան, մինչ ցարդ երկու զունդ հետևակի զնացեալ են յՕրևվան, ունելով զնշան զրօշակաց Արքայիցն Հայոց։ Այժմ ժողովեալ լինեն ձիաւոր զօրք և վասն սոցին ևս պատրաստեն զայլ զրոշակս»[62]։

Դժվար չէ ենթադրել, որ վավերագրում խոսքը հայկական կամավորական երրորդ գումարտակի մասին է, որի կապակցությամբ Աշտարակեցուն ուղարկած նամակներից մեկում Ալամդարյանը գրում է, թե զինվորական նահանգապետը թախանձում է կամավորական նոր զորահավաք կատարել, հատկապես Բորչալուի հայերից, իսկ ինքը չի համաձայնվում առանց Աշտարակեցու հրամանի[63]։

Իրոք, Մատենադարանի արխիվային բաժնի Կաթողիկոսական դիվանում պահվում է Սիպյագինի այն գրությունը[64], որ ակնարկում է Ալամդարյանը Ներսեսին հասցեագրված նամակում։

Աշտարակեցին ուշադրությամբ հետևում էր Նախիջևանի ուղղությամբ գործող ռուսական կորպուսի գործողություններին, որոնց շնորհիվ ռուսական բանակը կարևոր հաղթանակներ տարավ։ Գառնի-չայի և Վեդի-չայի ճակատամարտերից հետո, հուլիսի 26-ին գրավվեց Նախիջևանը, իսկ Ջևան-Բուլաղի հաղթական մարտերից երկու օր անց, հուլիսի 7-ին անձնատուր է լինում Աբբաս-աբադի բերդը։ Այս հաղթանակի ուրախ լուրի ազդեցության տակ է գրվել Ներսեսի նամակը ուղղված Սիմեոն արքեպիսկոպոս Բզնունուն, ուր կարդում ենք. «Զօրք Նորին Բարձր Գերազանցութեան յաղթանակեց ի վերայ զօրաց պարսից ի դաշտին Ապպասապատու՝ նախ զզինուորութեան Հասան խանի և ապա՝ զզինուորութեան շահզատայի՝ բեկեալ սաստկապես»[65]։

Նախիջևանի և Աբբասաբադի անկումից հետո Աբբաս-Միրզան, նպատակ ունենալով վերադասավորել իր ուժերը, դիմում է խորամանկության՝ հաշտության բանակցություններ վարելու պատրվակով զինադադար է խնդրում։ Բանակցություններն սկսվում են 1827 թ. հուլիսի 21-ին, Կարապիտաղինում։ Բանակցություններում ռուսական կողմը ներկայացնում էր Ա. Ս. Գրիբոյեդովը։ Սակայն օգոստոսի 4-ին, խախտելով իր իսկ խնդրած զինադադարը, Աբբաս-Միրզան մեծաքանակ մի բանակով անցնում է Արաքսը և սկսում հարձակողական գործողություններ[66]։ Պարսկական զորքը օգոստոսի 6-ին

61 Մաշտոցի անվ. Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, ս. 51, վավ. 45։
62 Նույն տեղում, վավ. 47։
63 Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վավ. 197։
64 Նույն տեղում։
65 Նույն տեղում, Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 796։
66 ЦГВИА, ф. ВУА, д. 4294, л. 13։

գրավում է Աշտարակը, իսկ 15-ին՝ պաշարում Էջմիածինը, ուր հանդիպում է հերոսական դիմադրության։

Տեղեկանալով Էջմիածնում տիրող դրությանը, Կրասովսկին շտապում է օգնության հասնել պաշարվածներին։ Նրա ջոկատը, որ բաղկացած էր ոչ ավելի, քան 2800 մարտիկներից (այդ թվում նաև հայկական առաջին կամավորական գումարտակը)[67], շարժվում է Էջմիածին։ Սակայն Օշական գյուղի մոտ հանդիպում է Աբբաս-Միրզայի 30000-անոց բանակին։ Տեղի է ունենում արյունահեղ մի ճակատամարտ, որ պատմության մեջ հայտնի է «Օշականի ճակատամարտ» անունով։ Քանակապես տասնապատիկ գերազանց ուժերի դեմ կռվող ռուսական ջոկատը ցուցաբերում է արտասովոր խիզախություն ու տոկունություն։ Ճակատամարտը երևան հանեց քաջ զորահրամանատար Կրասովսկու տաղանդն ու անձնական հատկանիշները՝ անվեհերությունն ու վճռականությունը։

Օշականի ճակատամարտն ունեցավ բարոյական մեծ նշանակություն և, չնայած բազմաթիվ զոհերին, «ձախողեց Աբբաս-Միրզայի Էջմիածինը գրավելու և Թիֆլիս շարժվելու պլանը»[68]։

Սեպտեմբերի 13-ին Կրասովսկին արդեն Սարդարապատի պարիսպների մոտ էր, իսկ բանակում գտնվող Ներսեսը դեռևս 12-ին դիմում է բերդում գտնվողներին մի կոչով, ուր ասվում էր. «...զի թէ յօժարեսցին նոքա յառաջ զթօփաձգութիւն զօրաց ռուսաց՝ և յառաջ, քան զկործանումն պարսպաց բերդիցն, ելանել յայտնի կամ անյայտ կերպիւ, և թողուլ զհակառակութիւն և զպատերազմն անօգտակար անձանց իւրեանց և սերնդոց և ժառանգաւորաց իւրեանց, այնպիսանցն տուալ լինիցի աղատ կամք՝ գնալ ապահովութեամբ ուր և կամք իւրեանց եղիցին, և որք ի նոցունց մնալոց իցէ ի հպատակութեան կայսեր ռուսաց, ունիցի զյոյս կատարեալ զի վայելել ունի զմեծ ողորմութիւն նորա լիագոյն ապահովութեամբ, իսկ՝ որ ոք կամիցի յամառել յուսով քաջամարտութեան իւրեանց և ոչ յօժարեսցի յառաջ զփորձն պատերազմեացն հոգ ունիլ վասն իւրեանց հեռացուցանելոյ զինքն ի հակառակութեանց և ի թշնամութեանց ընդդէմ ահաւոր զօրաց տիեզերասասան կայսրութեան ամենայն ռուսաց, այնպիսիքն ունին մատնիլ ի սուր աններելի վրէժխնդրութեամբ...»[69]։

Սեպտեմբերի 20-ին Սարդարապատը անձնատուր է լինում։ Այս հաղթանակում իրենց դերն ունեին նաև բերդում գտնվող հայերը[70]։

Բերդի գրավումով ռուսների ձեռքն է անցնում մեծ քանակությամբ զինամթերք և պարեն, առանց որի, ինչպես նշված է գործող կորպուսի օրագրության մեջ, «Երևանի պաշարումը կարող էր լինել ամբողջովին կասկածելի»[71]։ Ռուսական բանակի այս կարևոր հաղթանակի մասին Ներսեսն ավետում է Հին Բայազետի շրջանի Մելիք Աղաջանին, քեթիխուդաներին և այնտեղ գաղ-

---

67 Մ. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958, էջ 22—23։

68 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 5, Երևան, 1974, էջ 152։

69 Մաշտոցի անվ. Մատենադարան, ակադ. Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244, վավ. 257։

70 Լեո, Հայոց պատմություն. Նորագույն շրջան, մասն 2, Երևան, 1927, էջ 102։

71 ЦГВИА, ф. ВУА, д. 4292, թ. 11։

թած հասարակությանը, հորդորում նրանց՝ վերադառնալ իրենց գյուղերը, հավաստիացնում, որ շուտով Երևանն էլ ռուսներինը կլինի։ «Այժմ, ուրեմն, ջանասցիք վերադառնալ իւրաքանչիւրս գիւղորայս ձեր և հոգ անիլ վարի և ցանի, քանի ձմեռն չի վերաժամանեալ. և հաւատարիմ ձեզ թուեսցին բանք իմ, զի այսուհետև ամենայն Երևանու երկիրն ռուսաց կայսրութեանն է»[72]։

Երևանի պաշարումը սկսվում է սեպտեմբերի 24-ին, իսկ 25-ին բերդի վրա են թափվում պաշարող հրետանուց արձակված ռումբերը։ Ներսես Աշտարակեցին, գտնվելով Երևանը պաշարող զորքի հետ, բերդի շուտափույթ գրավման ակնկալությունն ունենալով, սեպտեմբերի 27-ին մի գրություն է ուղարկում Էջմիածին՝ Հովսեփ վարդապետին, որով պահանջում է Էջմիածնում գտնվող զենքի ընդունակ բոլոր հայերին, որտեղից էլ նրանք եկած լինեն, շտապ ուղարկել Երևան՝ հարձակվող բանակին միանալու։ «Առաքեցի առ ձեզ Ստեփանոսն մեր և գրեմ քեզ, որ ընդ ժամանելն իսկոյն հաւաքեցեալ զամենայն թուանք ունեցող հայս զդանեցեալս այդր ի սուրբ Աթոռն, թէ ի մեր գիւղացւոցն և յայլ և յայլ գիւղացւոց Լոռուայ և կամ Թիֆլիզ, այսօր, իսկոյն, յառաջ, քան զմտնելն արևու հասուսցես առ մեզ այսր ի բանակ և թէ լինելի ոք, որ ծուլասցէ, զայնպիսինս պատժեսցէս դու սաստկապէս»[73]։ Նույնպիսի բովանդակություն ունի մեկ օր հետո Աշտարակի և Օշականի հասարակություններին ուղարկած նրա կոչ-նամակը[74]։

Իրականանում է Ներսեսի ակնկալությունը. հոկտեմբերի 1-ին Երևանի պարսկական կայազորը անձնատուր է լինում։ Ընկնում է պարսկական սատրապության վերջին հենարանը Անդրկովկասում։

Սարդարապատի, ապա Երևանի գրավման փաստը, ինչպես երևում է Եղիազար Լազարյանին գրած նամակից, Ներսեսը համարել է Հայաստանի ազատագրում «ի հազարամեայ տառապանաց՝ կամ որպէս յարմար է ասել, ի դժոխատանջեալ գերութիւնից և յանօրէն բռնակալութիւնից բարբարոսաց»[75]։ Այդ ակտի կապակցությամբ նույն խոհերն էին համակել Հարություն Ալամդարյանին, որը Ներսեսին գրում էր. «Շնորհավորեմ զփրկութիւն Հայաստան աշխարհի յերկարէ հնոցէ անագորոյն պատրսից...»[76]։ Իսկ Խաչատուր Լազարյանն իր ուրախությունն արտահայտել է հետևյալ կերպ. «Վերջապես գթացեալ ամենակարող տէրն յանտերունչ որդիս Հայաստանի՝ ողորմեցաւ նոցա ըստ մեծի ողորմութեան իւրում և բարեյաջեցաւ ազատել նոցա ի ձեռաց անօրինաց... զամրոցն Երևանայ նուաճեցին ահա ընդ իշխանութեամբ Աստուածազօր տերութեանս...»[77]։

Հայրենի երկրի ազատագրմանը նվիրված Ներսեսի բոլորանվեր գործունեությունը երախտագիտության զգացում է առաջացրել ժամանակի հայ հասարակության բոլոր շերտերում։ Այդ գործունեության գնահատականը կա Խաչատուր Լազարյանի նամակում (8. 11. 1827 թ.), ուր նամակագիրը հույս է հայտնում, որ շուտով շնորհավորելու է Աշտարակեցուն «Բարձրագոյն ողոր-

72 Մաշտոցի անվ. Մատենադարան, Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 813։
73 Նույն տեղում, Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 819։
74 Նույն տեղում, վավ. 818։
75 Նույն տեղում, վավ. 821։
76 Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վավ. 208։
77 Նույն տեղում, Ալ. Սրիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 58։

մածութեան» առթիվ՝։ Ներսեսի հասցեին գրվատանքի խոսքեր է պարունակում Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսի նամակը (24. 12. 1827 թ.)[79]։ Նախիջևանի հայ հասարակությունը 1827 թ. դեկտեմբերի 6-ի շնորհավորական-ներբողական իր ուղերձը հղել է Ներսես Աշտարակեցու անունով։ Ուղերձում հատկանշական են հետևյալ տողերը. «Մեք տեսաք զայս ամենայն աչօք մերովք և մեք երջանիկ եղանք քան զհարս մեր, որք զվիճակ Հայաստանի արտասուօք պատուեցին, մեք այժմ պարտաւոր եմք ի վերա գերեզմանաց նախնեաց մերոց աւետարանիլ զփրկութիւն հայրենեաց մերոց աւանդելով զանուն փրկչիդ նորա յորդոց որդիս»[80]։ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Շահան-Ջրպետը ռուսական բանակի հաջող գործողությունների վերաբերյալ 1827 թ. հոկտեմբերի 25-ին հիացմունք արտահայտող նամակ է հասցեագրել Ներսեսին[81]։

Հոկտեմբերի 13-ին գեներալ Էրիսթովի զորագունդը գրավել էր Թավրիզը, որի անկումից հետո շահական կառավարությունը հաշտություն է խնդրում։ Բանակցությունները սկսվում են նոյեմբերի 7-ին, Դեհխարղանում։ Դեկտեմբերի 22-ին, շնորհավորելով Սղնախի հասարակությանը, Ներսեսը գրում է. «...ահա զոհանամք զԱստուած զի շնորհօք մեծ ողորմածութեանց նորա կորագլուխ եղեալ թշնամեաց խաչին Քրիստոսի, բռնակալաց Հայաստան ազգի և մեծ Հայաստանի Արարատեան աշխարհի»[82]։ Թեև հաշտության պայմանագիր դեռևս չէր կնքված, բայց Ներսեսը, ինչպես երևում է այս տողերից, չէր տարակուսում, որ Արարատյան աշխարհն ու նրա տարածքի վրա գտնվող հայությունն ազատագրված են բարբարոսական լծից։

Իրոք, հետագա դեպքերն ու ռուսական բանակի ռազմական նոր հաջողությունները շահական կառավարությանը հարկադրում են կնքել Ռուսաստանին ձեռնտու, իսկ հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող Թուրքմենչայի հաշտության հայտնի պայմանագիրը։

Թուրքմենչայը արդյունք էր ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմի, որի ընթացքում նոր որակով ու դրսևորմամբ արտահայտվեց ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը[83], դեպի Ռուսաստանը հայերի ունեցած քաղաքական հակվածության համաժողովրդական բնույթը, հայ և ռուս ժողովուրդների բարեկամական կապերի ամրությունը, ռուսական զորաջոկատների նկատմամբ հայ աշխատավորական զանգվածների ունեցած ամենաջերմ վերաբերմունքը։ Այդ իրողությունը դեպքերի ժամանակակից, ռուս պատմաբան Ս. Գլինկան արտահայտել է հետեյալ կերպ. «Зазвучало оружие русских у вершин Арарата, и дух Армении стал на вспомогательную стражу полков русских»[84].

---

78 Նույն տեղում, Լազարյանների արխիվ, թղթ. 103, գ. 5, վավ. 286։

79 Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վավ. 105։

80 Նույն տեղում, վավ. 76։

81 Նույն տեղում, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 153, վավ. 124։

82 Նույն տեղում, Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 291։

82 Տե՛ս Զ. Գրիգորյան, Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը XIX դարի սկզբին, Երևան, 1957։

84 С. Глинка, Обозрение истории армянского народа, ч. 2, М., 1832, էջ 253։

УЧАСТИЕ АРМЯНСКОГО НАРОДА В РУССКО-ПЕРСИДСКОЙ ВОЙНЕ 1826—1828 гг.

К. М. ОГАНЕСЯН

(Резюме)

В статье, написанной на основе первоисточников, отражены вопросы русско-армянских отношений в период русско-персидской войны 1826—1828 гг. В период войны русская ориентация армян Восточной Армении носила всенародный характер, и многовековые чаяния масс трудового народа связывались с исходом этой войны. Архивные материалы свидетельствуют о массовом героизме армянского народа и о многочисленных фактах оказания материальной помощи русскому войску. В статье говорится также об отношении современников к вопросу организации армянских ополченческих отрядов и добровольческих дружин, а также о некоторых сторонах деятельности видного деятеля армянского освободительного движения Нерсеса Аштаракеци.